

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՕՏԱՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ «ՄՈՒՐՃ»-ՈՒՄ

Ներկայ Յ. Դ. համարում վերջանում է վրացի իշխան Իլիա ձաճաւաճէի վէպը Կաթա-Աղամիանի (Միթէ մարդ է, աղամորդի?!): Թողնելով որ նորա գրական գնահատութիւնը կատարւի իւր տեղում, մենք, ալդ վէպը տպագրելու առիթով, ահա ինչ կարող ենք լսելու: Դեռ ևս «Մուրճ»-ի հրատարակութիւնը սկսելով, մենք մտադրութիւն ունէինք, բացի մեր սեպհական կեանքին վերաբերեալ բաժիններից, «Մուրճ»-ում ունենալ նաև բաժիններ ալն ազգերի համար, որոնց կեանքը մեզ համար կամ կուլտուրական կամ քաղաքական կողմից վճռական նշանակութիւն ունեն: Ալդ ազգերն են՝ Եւրոպայի առաջնակարգ կուլտուրական ազգերը, ապա Ռուսիան, Թուրքիան և Պարսկաստանը իրանց ներքին քաղաքական հասարակական և գրական կեանքով, և ապա մասնաւորապէս՝ հայերին հարևան ազգերը՝ Թուրքեր, քուրդեր, վրացիք՝ իրանց կեանքի ալն կողմերով, որոնք առանձին կարևորութիւն ունեն հայերիս համար:

Մեր ալդ սկզբնական ծրագիրը մի անգամից իրագործելու համար մենք չունէինք միջոցներ՝ ոչ գրամով, որ կարողանալինք դորա համեմատ «Մուրճ»-ի ծաւալը մեծացնել, ոչ բաւականաչափ պատրաստած աշխատակիցներով: Ալդ պակասում է մեզ նաև ալսօր. բայց ալդ նոյն ձգտումների իրագործելու փորձերը պէտք է համարել «Մուրճ»-ի ալն բաժինների բացումը, որ մեր մշտական ընթերցողներին լսելի են «Թղթակցութիւններ Արասահմանից» և «Նամակներ Ռուսաստանից» անուններով, որոնց մշտապէս երևալուն «Մուրճ»-ի ամեն մի համարում միակ արգելքը նոյն հանգամանքն է, որ արգելք է դառնում նաև «Մուրճ»-ի թերթերի թւի մեծացնելուն: Սպասելով ուրեմն աւելի բարեւալող հանգամանքներին, մենք պէտք է լսենք նաև ալս, որ վերը փշած ծրագրի արտալստութիւններից պէտք է համարել վրաց հրապարակախօս վիպասան ձաճա-

ւաճէի կացիւ-Աղամիանի վէպի երևալը «Մուրճ»-ի էջերում, որպէս նաև անցեալ № 3-ում տպւած փոքրիկ լօղւածը վերաբերեալ վրաց գրականութեան և մասնաւորապէս իշխան Ճաւճաւաճէին: Եթէ չենք սխալուում, սա առաջին գէպքն է, որ մեր գրականութեան մէջ մի վրացական մեծ գրւածք լիակատար կերպով լուս է տեսնում հայերէն թարգմանութեամբ: Առաջին անգամ մի աղկալիսի փորձ արեւ է կռւնկ ամսագրում վրաց հռչակաւոր միջնադարնան բանաստեղծ Շոտա Ռուստաւելու «Ընձի մորթի» պօէմի նկատմամբ, որից սակալն միայն մի կտոր թարգմանեց:

ԿՈՎԿԱՍՍԱՆ ԳՐԱՓՆՆԱԿԱՆ (ցենզուրալն) կոմիտեի պարտնալը մալիս ամսին լրացուեց նշանակելովը կոլլեգիական խորհրդական պ. Ալեքսանդր Քիշմիշեանցի՝ տեղական և արեւելեան լեզուների աւագ գրաքննիչի պաշտօնի համար, որի տեղը բաց էր մնացած պ. Սոլոմոն Մելիք-Մեհրաբեանի արձակելուց չետ իւր պաշտօնից: Կոմիտեի նախագահի և միւս անգամներիցուցակը մենք հրատարակեցինք «Մուրճ»-ի ներկալ թւականի 3-դ համարում, երես 411—412:

ՕԴԵՍՍԱ, պ. Վերապեանին: Ստացանք 2 ռուբլին:

ՎՐԻՊԱԿ, Ներկալ № 6-ում, պ. Բալադեանի «Միկրոբներ» լօղւածում երես 784, տող 7 ըդ տպւած է «Չնշում էր», պէտք է լինի «ճնշում էր», երես 752, Ներքեից 6-րդ տող տպւած է՝ «գետերի», պէտք է լինի՝ գետերի:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Էջմիածնի Ս. Սիմոնի վճռի համաձայն, կատարելու են զալ 1892 թւականի մալիս ամսալ 3-ին և ոչ 13-ին, ինչպէս սխալմամբ տպւած էր անցեալ № 5-ում:

ՊՐ. ԳԱԼՈՒՍՏ Ս. ԳԻՒԼՊԷՆԿԱՆԻՑ սաացանք նորա մի ընդարձակ լօղւածը՝ Ապչերոնեան թերակղզին և ռուսաց կերոսինը (La péninsule d'Apchéron et le pétrole russe) տպւած Պարիզում հրատարակող Փրանսիական Revue des deux Mondes լալտնի ամսագրի սոլն տարալ մալիս ամսալ երկրորդ տետրում: Պր. Կիւպենկեանի լօղւածը ալեքան կարեոր, բաղմակողմանի և լալ գրւած է, որ ալդ լօղւածը թարգմանաբար կամ քաղւածօրէն առաջ կը բերենք «Մուրճ»-ի հետեեալ համարներում: **ԲԱԺԱՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԻ** մասին մենք կրկին լիեցնում ենք, որ լուլիսի 1-ին, լալտարաւած պալմանների համաձայն, պէտք է լիովին վճարւած լինեն:

ՆՈՐ ԳՐՔԵՐ.—15) ԼԵՐՄՈՆՏՈՎ, Մ.—«Դեռ», թարգմ. Սատաթեանի, Հրատ. «Աղբիւր» և «Տարաղ» պատկ. թերթերի. տպ. Արօր, գինն է 30 կ.